ԿԱՐԾԻՔ

Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ Արթուր Սրապի Նազարեթյանի ԺԲ.00.04- Դատական իրավունք-դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար «Վճռաբեկ վարույթի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Արթուր Նազարեթյանի կողմից հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը նվիրված է քաղաքացիական դատավարության իրավունքի բավարար չափով չուսումնասիրված ինստիտուտներից մեկի, այն է՝ վճռաբեկ վարույթի հիմնախնդիրներին ՀՀ քաղաքացիական դատավարությունում, դրա ընթացքում ծագող դատավարական իրավահարաբերություններին և դրանց հետ կապված հիմնահարցերի հետազոտմանն ու վերլուծությանը:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո վերափոխվեց նաև տնտեսական համակարգը: Օրենսդրորեն ներդրվեց մասնավոր սեփականության ինստիտուտը և սկսեց զարգանալ ազատ շուկայական հարաբերությունները: Այս պայմաններում անհրաժեշտ դարձավ բարեփոխել ներպետական օրենսդրությունը և դատական համակարգը: 1995թ. ՀՀ Սահմանադրության ընդունմամբ տրվեց դատաիրավական բարեփոխումների մեկնարկը, որից անմասն չմնաց նաև դատական իշխանությունը:

1998թ. ՀՀ քաղաքացական դատավարության օրենսգրքի ընդունմամբ մեզանում ներդրվեց համաշխարհային փորձով արդարացված ավանդական վճռաբեկ վերանայման ինստիտուտը: Այս վարույթի կարգով վճռաբեկ դատարանը ստուգում է ստորադաս (վերաքննիչ) դատարանի վճիռների ու որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունն իրավական առումով, այսինքն և՛ նյութական, և՛ դատավարական իրավունքի նորմերի կիրառման ճշտության

տեսանկյունից: Ի տարբերություն առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործերի քննության կարգերի, այս վարույթի կարգով կայացվող որոշումները վերջնական են և բողոքարկման ենթական չեն: Նշվածից հետևում է, որ այս փուլում դատական պաշտպանության իրավունքի իրագործման և արդարադատության մատչելիության հավասար հնարավորության ապահովումն ունի հիմնարար նշանակություն:

Նախկին Քաղ. դատ. օր-ը չէր արտացոլում ժամանակի ընթացքում զարգացող, փոփոխվող և բարդացող հասարակական հարաբերությունները: Օրենքը բազմաթիվ հարցերի լուծումը թողել էր դատական հայեցողության, այսինքն՝ դատական կամայականության կամ դատական նախադեպի, որը ռոմանոգերմանական իրավական համակարգում, որին պատկանում է նաև Հայաստանի օրենսդրությունը, այդչափ կիրառելի չէ:

«Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ.. ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ նախագահի 01.07.2012թ. կարգադրությամբ նախատեսվեցին դրույթներ՝ ուղղված քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացմանը, այդ թվում՝ վճռաբեկ վարույթի փուլում:

Վերը նշված խնդիրները մասամբ լուծվեցին ՀՀ քաղ. դատ. օր-ում 10.06.2014թ. կատարված փոփոխություններով, սակայն դրանց ամբողջությունը, ինչպես նաև հասարակական հարաբերությունների մշտական զարգացումը և դրանց լիարժեք կարգավորման անհրաժեշտությունը, ՀՀ 2015թ. սահմանադրական փոփոխությունները, մարդու իրավունքների եվրոպական դատարանի ու ՀՀ սահմանադրական դատարանի՝ մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական դատավարության տարբեր ինստիտուտների էության ու կիրառման (այդ թվում՝ վճռաբեկ վարույթի) վերաբերյալ արտահայտած դիրքորոշումները, քաղ. դատ. օր-ն իրավական տեխնիկայի ներկա պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը հանգեցրին այնպիսի իրավիճակի, որի պարագայում ՀՀ-ում անհրաժեշտ դարձավ մայրցամաքային Եվրոպական իրավական համակարգին լիարժեք համապատասխան նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունումը:

Վերը նշվածին զուգահեռ, ՀՀ կառավարությունը 2017թ. դեկտեմբերին ընդունեց «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2018-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ ….. –Ն- որոշումը, սահմանեց նշված բարեփոխումների ռազմավարության ընդհանուր նպատակը և ուղղությունները, այդ թվում ՝ վարչական և քաղաքացիական արդարադատության արդյունավետության ապահովման, նյութական և դատավարական օրենսդրությունների՝ հասարակական հարաբերությունների զարգացմանը համահունչ կատարելագործման և նոր օրենսդրության կիրառման արդյունավետությունն ապահովելու անհրաժեշտությունը:

Վերը նշված բարեփոխումների ռազմավարությանը, նպատակներին և ուղղություններին համապատասխան մշակված նոր քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվեց 2018թ. փետրվարի 9-ին և գործողության մեջ դրվեց 2018թ. ապրիլի 9-ից: Նոր օրենսգիրքը բավարար չափով կարգավորեց քաղաքացիական դատավարության անհստակությունները, թերությունները և բացերը, սակայն որոշ հարցերում, այդ թվում վճռաբեկության ինստիտուտի հետ կապված, նոր օրենսգիրքը նույնպես հետագա կատարելագործման կարիք ունի:

Դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման բնագավառում առանցքային են համարվում ՀՀ քաղաքացիական դատավարության վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման ինստիտուտը և այդ կապակցությամբ դատական պրակտիկան, այս ոլորտը կարգավորող օրենսդրության ոչ բարվոք վիճակը և հայ իրավագիտության կողմից քննարկվող ինստիտուտի խորը գիտական հետազոտությունների բացակայությունը պայմանավորում են կատարված ուսումնասիրության արդիականությունը և հրատապությունը:

Հեղինակն իր առջև նպատակ է դրել բացահայտել վճռաբեկ վարույթի տեսական և գործնական խնդիրները, կատարել վճռաբեկ վարույթի փուլում արդարադատության մատչելիության ապահովման հետ կապված խնդիրների համալիր ուսումնասիրություն, գնահատել դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավական կարգավորման արդյունավետությունը, բացահայտել ու

հստակեցնել գործող օրենսդրության ու դատական պրակտիկայի թերությունները, առաջարկներ մշակել վճռաբեկ վերանայման ընթացակարգը կարգավորող օրենսդրությունը կատարելագործելու համար: Կարծում ենք, հեղինակին հաջողվել է վերոնշյալ նպատակներին հասնելու համար մանրամասն ներկայացնել վճռաբեկ վարույթի ծագման և զարգացման պատմությունը: Նախանշել է այն պայմանները, որոնց առկայությունը անհրաժեշտ է ՀՀ-ում դատական պաշտպանության իրավունքի առավել ամբողջական իրացման համար, մանրամասն ուսումնասիրել և վերլուծության է ենթարկել ներկայումս այս ինստիտուտը կարգավորող օրենսդրությունը և դատական պրակտիկան, բացահայտել է այս վարույթում արդարադատության մատչելիությունն ապահովող օբյեկտիվ, սուբյեկտիվ և ֆորմալ նախապայմանները և արել է օրենսդրությունը կատարելագործելուն ուղղված առաջարկներ:

Աշխատանքի առանձնահատուկ արժեքը նրանում է, որ հեղինակը չի խուսափել հետազոտության թեմային առնչվող այնպիսի հարցերի անդրադառնալուց և դրանց վերաբերյալ լուծումներ ու առաջարկություններ ներկայացնելուց, որոնք մինչ այժմ բազմաթիվ վեճերի տեղիք են տալիս մասնագիտական գրականության մեջ, որի հետևանքով էլ հետազոտող բազմաթիվ հեղինակներ փորձում են չանդրադառնալ այս հարցերին:

Ատենախոսն օգտագործել է մեծածավալ գրականություն, այդ թվում՝ մենագրություններ, թեմային առնչվող գիտական հոդվածներ, ատենախոսություններ և սեղմագրեր, ինչպես նաև դատական պրակտիկայի նյութեր, որոնք էլ ավելի են բարձրացնում կատարված աշխատանքի արժեքը:

Ուսումնասիրության գիտական նորույթն արտահայտված է պաշտպանության ներկայացվող դրույթներում, որի հիման վրա հիմնավորվել են նոր գիտական դրույթներ և մշակվել առաջարկներ Հայաստանի օրենսդրության կատարելագործման վերաբերյալ: Պետք է նշել, որ հեղինակին լիովին հաջողվել է իրականացնել վճռաբեկ վարույթի հետ կապված դատավարական հարցերի համակողմանի վերլուծություն:

Հեղինակը վճռաբեկ վարույթին վերաբերող հիմնահարցերի ուսումնասիրությունն իրականացրել է պատմահրավական, ինչպես նաև ներպետական և մի շարք այլ երկրների օրենսդրությունների իրավահամեմատական վերլուծությամբ:

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, դրա գիտական մշակվածության աստիճանը, տեսական, նորմատիվ, փորձառական, մեթոդաբանական հիմքերը, ատենախոսության օբյեկտը և առարկան, հետազոտության նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ձևակերպվել են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Աշխատանքի առաջին գլուխը վերաբերում է վճռաբեկ վարույթի ծագմանը և զարգացմանը, ՀՀ-ում վճռաբեկ ինստիտուտի վերականգնման նախադրյալներին:

Երկրորդ գլուխում քննարկվում են վճռաբեկ բողոքարկումը որպես դատական պաշտպանության իրականացման երաշխիք, վճռաբեկ վարույթի սուբյեկտները, վճռաբեկ բողոքարկման օբյեկտները, բողոքարկման ժամկետները, բողոք ներկայացնելու կարգը, վճռաբեկ դատարանի կողմից գործը դատական քննության նախապատրաստելու հարցերը:

Երրորդ գլխում վերլուծվել են վճռաբեկ դատարանում գործերի քննության կարգը, վճռաբեկ դատարանի լիազորությունները, վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտերի բեկանման հիմքերը:

Չորրորդ գլխում ներկայացվել է վճռաբեկ վարույթի նպատակները և խնդիրները ըստ ՀՀ նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքի, անդրադարձ է կատարվել վճռաբեկ բողոքը գործին մասնակցող անձանց միջնորդությամբ դատական նիստում քննելու հարցին:

Եզրակացությունում ատենախոսն ամփոփել է կատարված աշխատանքի արդյունքում ձևավորված իր մոտեցումները:

Ատենախոսությանը կցված են նաև հավելվածներ, որոնք վկայում են այն մասին, որ հեղինակի առաջարկած որոշ դրույթներ իրենց արտացոլումն են գտել իր հրապարակումներից ավելի քան երեք տարի հետո ընդունված նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

Ատենախոսության վերաբերյալ կան նաև որոշ դիտողություններ, որոնցից հատկապես կցանկանայինք ընդգծել հետևյալները՝

1. Հեղինակը աշխատանքի 2-րդ գլխի 4-րդ պարագրաֆում, խոսելով վճռաբեկ բողոքարկման ժամկետների մասին, քննարկման առարկա է դարձրել նաև բաց թողնված դատավարական ժամկետը մերժելու մասին որոշման բողոքարկման հիմնահարցը և առաջարկել է Քաղ. դատ. օր.-ի 361-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ձևակերպել հետևյալ կերպ՝

«հայցադիմումի ընդունումը և բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնումը մերժելու մասին որոշումները»:

Այս հոդվածում ամրագրված է 15 կետ: Կարծում ենք, ատենախոսի կողմից առանձին կետով առաջարկելը ավելի նպատակահարմար կլիներ, քան երկու առանձին դատավարական գործողության մասին որոշումները միացներ մեկ տեղում:

2. Ատենախոսը նույն գլխի 2-րդ պարագրաֆում, քննարկելով վճռաբեկ վարույթի սուբյեկտների հասկացությունը, ցանկը, առաջարկում է լրացնել բողոքարկող սուբյեկտների ցանկը և Քաղ. դատ.օր.-ի 389-րդ հոդվածում ներառել նաև **գործին մասնակից չդարձված անձանց, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է եզրափակիչ դատական ակտ:**

Այս հոդվածի 3-րդ մասում ամրագրված է, որ բողոքարկման սուբյեկտ են համարվում նաև գործին մասնակից չդարձված անձինք, որոնք իրավունք ունեն վճռաբեկ բողոք բերելու իրենց կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված որոշման, իրենց կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելու, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու, իրենց կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիման վրա հարուցված վերաքննիչ վարույթը կարճելու կամ գործի վարույթը կասեցնելու մասին որոշումների, ինչպես նաև սույն օրենսգրքի 383-րդ և 384-րդ հոդվածներով նախատեսված հարցերով վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումների դեմ: Իսկ Քաղ. դատ. օր.-ի 390-րդ հոդվածում ամրագրված է, որ անձը չի կարող դատական ակտը բողոքարկել վճռաբեկ դատարան, եթե նա եզրափակիչ դատական ակտը նույն հիմքով չի

բողոքարկել վերաքննիչ դատարանում: Վերը նշվածի համատեքստում կարծում ենք, որ նոր օրենսգրքով բավարար չափով կարգավորված է ատենախոսի կողմից բարձրացրած հարցը:

3.Պաշտպանության դրված դրույթների 8-րդ կետում հեղինակն առաջարկում է Քաղ. դատ. օր-ի 404-րդ հոդվածով Վճռաբեկ դատարանին իրավունք վերապահել **«օրինականության շահերից ելնելով դուրս գալ բողոքի փաստարկների սահմաններից և դատական ակտը ստուգել ողջ ծավալով»:**

Կցանկանայինք հեղինակի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Քաղ. դատ. օր-ով այս հարցը որոշակիորեն կարգավորվել է: Այսպես, ըստ սույն օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի՝ վճռաբեկության կարգով բողոքի քննության ժամանակ Վճռաբեկ դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, բացառությամբ սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի: Վերոնշվածից ակնհայտ է, որ օրենսգրքով որոշակիորեն կարգավորնած է հեղինակի առաջ քաշած խնդրո առարկա հարցը:

Արված դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության վրա, այլ հետապնդում են աշխատանքը էլ ավելի որակյալ տեսնելու նպատակ:

Ատենախոսությունն ունի ընդգծված գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ավարտուն, ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են վճռաբեկության փուլում դատական պաշտպանության իրավունքի առավել ամբողջական իրագործման և արդարադատության մատչելիության հավասար հնարավորության ապահովման հետ կապված կարևոր և արդիական խնդիրներ:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են թվով 14 գիտական հոդվածներում: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու եզրահանգումները:

Ատենախոսության մեջ ամրագրված վերլուծություններն ու առաջարկները հիմք են տալիս եզրակացնելու, որ ատենախոսությունը համապատասխանում է

նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը ցուցաբերել է գիտահետազոտական-վերլուծական զգալի ընդունակություններ, կատարել բազմակողմանի հետազոտություն, ներկայացրել է պատշաճ մակարդակով գրված, տեսական և գործնական մեծ նշանակություն ունեցող աշխատություն:

Այսպիսով, Արթուր Սրապի Նազարեթյանի «Վճռաբեկ վարույթի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, գտնում ենք, որ ատենախոսության հեղինակն արժանի է «ԺԲ.00.04- Դատական իրավունք-դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
Խ. Աբովյանի անվան Հայկական
պետական մանկավարժական
համալսարանի հասարակագիտության
ամբիոնի դոցենտ, իրավաբանական
գիտությունների թեկնածու Ս.Վ. Բարխուդարյան

Պարոն Ս. Բարխուդարյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ
ՀՊՄՀ-ի գիտական քարտուղար,
մանկ. գիտ. թեկ. դոցենտ Մ.Մ. Իսպիրյան

02.07.2020